



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մարտ 26, 1982

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՐ ՀԱԽԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒՆ ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԵՐԿՈՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԶԻ ՄԻՋԱՄՏԵՐ ԹՈՐՈՆԹՈՅԻ
Ս. ԽԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարան ղրկուած երկու հեռագիրներէն առաջինին մէջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կը յայտնէ Առաջնորդ Սրբազան Հօր. «Թորոնթոյէն Քիւրքմեան հեռագրինց խնդրելով արտօնութիւն ինդոյեան Եպիսկոպոս իրենց ծուխին համար: Մենք բացարձակապէս մերժեցինք:»


Երկրորդ հեռագիրով Վեհափառ Հայրապետը Առաջնորդ Սրբազանին կը յայտնէ. «Կը հաստատենք ստացուած ձեր հեռագրին Թորոնթոյի Սուրբ Խաչ համայնքի վերաբերեալ: Վերջին օրերս տասնեակ բողոքի հեռագիրներ կը ստանանք, խնդրանքով որ հոգեւոր հովիւ ունենան մեր կարգադրութեամբ: Մենք որեւէ պատասխան չենք յղած:»

Պէտք չէ հաւատալ պաշտօնագուրկ անձերու տարածած սուտ լուրերուն, թէ Մայր Աթոռը խոստումներ կատարած է միջամտելու թեմական իշխանութեանց որոշումներուն:

Թեմական խորհուրդի որոշումին համաձայն թեմական իշխանութեան ենթակայ եւ սակայն անկարգ ծխական խորհուրդը եւ ծխական ժողովը լուծուած են: Նշանակուած նոր ծխական խորհուրդին եւ Հոգեւոր Մատակարարին պարտականութիւններ տրուած են մեր ժողովուրդին հոգեւոր կարիքները հոգալու, Ս. Պատարագի մատուցումով եւ Սուրբ Խորհուրդներու կատարումով:

Ծխական խորհուրդը պարտականութիւն ունի ծուխը վերակազմելու արձանագրուող տրատու նոր անդամներով, որոնք ապագային պիտի հրաւիրուին գումարելու ծխական Անդամական ժողովը:

Ներկայիս ծուխը պիտի կոչուի Հայց. Եկեղեցի նորժ Եորքի: Ապագային օրինաւոր ծխական Անդամական ժողովը պատճութիւն պիտի ունենայ ծուխը կոչելու որեւէ մասնաւոր անունով:



ԴՈՒՍՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՍԻ